ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Նոյեմբերի 5-ին (հոկտեմբերի 26-ի փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 59 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր հիսուներկու, աշխատանքի տեղավորման՝ երեք, վթարված տան, տանիքի վերանորոգման, սեփականաշնորհված տարածքի և էլեկտրաէներգիայի վերականգնման հարցերով՝ մեկական քաղաքացի: Դրամական օգնության դիմումներին տրվել է դրական լուծում: Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին դիմած երկու քաղաքացիները: Մարզպետը աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարեց ուսումնասիրել վթարված տան, տանիքի վերանորոգման, սեփականաշնորհված տարածքի և էլեկտրաէներգիայի վերականգնման վերաբերյալ դիմումները և ներկայացնել համապատասխան առաջարկություն:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ